ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ
«ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ԲԱԲԱՅԱՆԻՑ
/անձն. AM 0799940, տրվ. 09.07.2012թ ., 001-ի կողմից
Հաշվառման հասցե՝ ՀՀ,Արմավիրի մարզ
Եղեգնուտ 4 փողոց, 8 տուն;
Ծանուցման և բնակության հասցե՝ ք. Երևան,
Անդրանիկի փողոց 29 շենք 12 բնակարան

Ք. Երևան 07.09.2020թ.

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հարգելի պարոն Քաղաքապետ՝

<<Հավաքների ազատության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով ղեկավարվելով՝ ներկայացվում է սույն Իրազեկումը:

<<Ռեֆորմիսների>> Կուսակցությունը 2020 թվականի սեպտեմբերի 18-ին ժամը 18:30-ից մինչև ժամը 20:00–ն Երևանի Մատենադարանի հարող տարածքից Մաշտոցի պողոտայով, Ամիրյան փողոցով դեպի Հանրապետության Հրապարակ հավաք -երթ է կազմակերպելու:

Սույն հավաքի, երթի նպատակն է՝Արտախորհրդարանային Ընդդիմության ռեֆորմների և Հայաստանում ժողովրդավարության վերականգնման իրականացման պահանջի ներկայացնելը:

Հավաքի ժամանակ օգտագործվելու են պաստառներ, դրոշներ, բարձրախոսներ, ուժեղացուցիչներ /աուդիոտեխնիկա/:

Մասնակիցների սպասվող թիվը 500-1000 /հինգ հարյուրից- մեկ հազար/ մարդ:

Հավաքի, երթի կազմակերպիչ է հանդիսանում «Ռեֆորմիստներ» Կուսակցությունը՝ ի դեմս Վահան Բաբայանի: Կարգադրիչների նախատեսվող թիվն է՝ 5/հինգ/ Կարգադրիչները կրելու են սպիտակ տեսանելի տարբերանշաններ՝ վրան գրված «կարգադրիչ» բառը:

<<Հավաքների ազատության մասին>> ՀՀ օրենքի համաձայն 16-րդ հոդվածի 2-րդ ,3-րդ կետերի համաձայն.

2 . Լիազոր մարմինը իրազեկումը մուտքագրելուց հետո այն անհապաղ ուղարկում է ոստիկանություն՝ հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:

3. Եթե հավաքը նախատեսվում է անցկացնել պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքում կամ դրանց անմիջական հարևանությամբ, ապա մուտքագրվելուց հետո իրազեկումն անհապաղ ուղարկվում է նաև մշակույթի նախարարություն՝ հավաքի անցկացման վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:

Ուստի խնդրում ենք՝ հավաքի կազմակերպչին անհապաղ հայտնել Իրազեկումն ի գիտություն ընդունելու և Ոստիկանությանը իրազեկման մասին տեղեկացնելու մասին:

Հավաքի ղեկավար՝ ԱԱՀ, պաշտոնը, հասցե ,հեռ, էլ. փոստ:

Հասարակական կարգի ապահովման պատասխանատու՝ Կարեն Վարդանյան, Կուսակցության փոխնախագահ, հասցե՝ ք.Երևան, Ա.Խաչատրյան 18/88, հեռ՝099314595, էլ.փոստ՝ karen231276@mail.ru:

Որպես նախատեսվող հավաքի ղեկավար հայտնում եմ , որ հավաքի բնականոն ընթացքն ապահովելու համար, ձեռնարկվելու են բոլոր անհրաժեշտ միջոցները:

Ազատ հավաքներ անցկացնելու իրավունքը երաշխավորված է ՀՀ օրենսդրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով:

- կից՝ անձնագրերի պատճենները:

Հարգանքով՝
<<Ռեֆորմիստներ>> Կուսակցության
Նախագահ՝

Վահան Բաբայան

ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌԵՖՈՐՄԻՍՏՆԵՐ

« 7 » սեպտեմբերի 2020թ. N- 28

Ռեֆորմիստների կուսակցության խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

Համաձայն Ռեֆորմիստների կուսակցության 2020թ. Սեպտեմբերի 7-ին կայացած խորհրդի նիստի ժամանակ կուսակցության նախագահ Վահան Բաբայանի հնչեցված առաջարկին, խորհուրդը որոշեց՝

1. Ս.թ. սեպտեմբերի 18-ին ժամը 18:30 անցկացնել հանրահավաք Մատենադարանին հարակից տարածքում և 20:00 անցկացնել երթ Մեսրոպ Մաշտոցի պողոտա – Ամիրյան փողոց – Հանրապետության հրապարակ երթուղով, որտեղ և ավարտել միջոցառումը:
2. Հանրահավաք-երթը նշված օրը նշված ծրագրով անցկացնելու մասին օրենքով սահմանված կարգով տեղեկացնել լիազոր մարմնին:

Խորհրդի անդամներ՝

Վահան Բաբայան

Կարեն Վարդանյան

Ինեսսա Հարությունյան

Նատալյա Սաղիյան

Գարիկ Ուրումյան

Սամվել Բաղեյան

Լիլիթ Հովակիմյան

Արմեն Ամիրջանյան

186111 2

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
No 20/.22405 08 09 2020 թ.